



ՍիաՄանթո

Խեղդամահ

Ու գետնափոր նկուղին մէջ քառասուն անձ՝
Արջառներու սարսափահար հօտի մը պէս,
Որ աւագահողմի հարուածներէն կը հալածուի,
Մահուան դիմաց դողահար եւ մէկգմէկ ջախջախելով՝
Չորս պատերուն մէջ խաւարտչին խոնուեցանք...:
Ապառի լռութիւն մը իր սարսափովը կը ծանրանար,
Շշուկ չրկար, շնչող չրկար, շրթոնքները փակ էին,
Եւ ամենուս նայուածքները քստմնելի եւ դիւային,
Մէկգմէկու վրայ յառած՝ մէկգմէկու մահ կ'ուզէին...:
Արեւածագէ մը մինչ արեւածագըն յաջորդ,
Այսպէս անձայն եւ անօթի, գերեզմանի քարերուն
պէս՝
Մենք մեր մարմնոյն վրայ, մեր սարսափն
երկաթեցինք...:
Ու մեր թաքուն կատաղանքն եւ կարօտը
կոտորելու մտածումով՝
Մեզմէ շատերն սկսան մոլեգնօրէն, իրենց մատները
կրծոտել...
Եւ ապառաժեայ լռութիւնը անհունին պէս մեր
աչքերուն կ'երկարէր...:
Բայց արեւին տակ՝ հագարաւոր անասնաղէմ
բարբարոսներ՝
Բերրի դաշտերն ու գիւղերն աւերելէ դեռ չըլլողնած,

Մեր թաքստոցը փնտռելով՝, մեր մահը դեռ
կ'ուզեին...:

Եւ գետնափորի մութերուն մէջ մահացնոր՝
Մենք սարսափո՛վ, սարսափո՛վ, սարսափո՛վ, էր որ
լսեցինք,
Հրագէնի, նիզակներու, սուիճներու եւ սուրերու,
Կայծակնապար շառաչիւնն որ արեւին տակ կը
վառէր...

Ու դիակնե՛ր, դիակնե՛ր մեր նկուղին երդիքներուն
վրայ,

Արմատախիլ ծառերու պէս, սրսփանքով վար
կ'իյնային,

Հոգեվարքի հոնդիւններ՝ մերթ ամեհի եւ մերթ խուլ՝
Պատերէն ներս, նկուղին մէջ կուգային մեզ ցնորել:

Եւ հողապատ ձեղունէն, որ մեր վրան թագաղի մը
պէս կը փակուէր՝

Վէրը հոսող տաք արիւնը յորդառատ՝ ծակտիքներէն
վար սուզուելով...

Սկսաւ ալ կաթի՛լ կաթիլ մեր դէմքերուն վրայ
ծորիլ...:

Բայց նորածին մը նորէն սուր ճիչով մը սկսաւ լալ.

Մեր դաւաճանն անտարակոյս այդ անմեղը պիտի
ըլլար.

Որոշման մը, եղէտնի մը, ոճիրի մը յոյսը միայն կար
մեզի,

Երբ իր մայրն հեծեծանքով մը ալ վերջապէս փափսաց...

Աստուած մեզի թո՛ղ գթայ, ստիճներս պարապ են.

Ա՛լ կաթիլ մը կաթ չունիմ. մինչեւ արիւնս ծծել
տուի...:

Ա՛լ կաթիլ մը կաթ չունիմ, ինչ որ կ'ուզէք
վճռեցէ՛ք...

Պէտք է խեղդե՛լ, ըսաւ մէկը իր բազուկն
բարկութեամբ մը երկարելով.

Պէտք է խեղդե՛լ... փափսացինք քառասուն անձ
նոյն ատեն...

Նախ եւ առաջ զիս խեղդեցէք եւ յետոյ իմ գաւակս ...
Ձայնը առին, տանիքն արդէն բրիչներով կը
փորեն...

Բոլորս մէկ մատնուեցանք, արդէն տանիքը կը
փորեն...

Արդէն հողը վար կը թափի, լոյսն արդէն կ'երեւայ...

Կը պաղատի՛մ, խեղդեցէ՛ք զիս. ահաւասիկ իմ
կոկորդս եւ կոկորդն իմ գաւակիս...

Ու հայ մայրն իր վզին հետ՝ գաւկին վիզը մութին
մէջէն մեզ երկարեց...

Խաւարին մէջ, երկու բազուկ օճերու պէս գալարուելէն,
Մանկան վիզը գտնելով՝ ահեղութեամբ մը գայն
սեղմեցին...:

Լռութիւնն, այս անգամ, նկուղին մէջ մրրիկ մ'էր:
Ես, ըռպէ մը, կարծեցի որ բոլորս մէկ արժանապէս
մահացանք...:

Պահ մը յետոյ՝ խաբուած մարդու հայիւզներով
տղմաթաթաւ,

Զգացինք որ արիւնախում խուժանը յուսահատած,
կը հեռանար...:

Փրկութի՞ւնն էր մեզի հասած: Ստրուկները կը
փրկըլի՞ն: Ա՞յսպէս պէտք է փրկըլիլ...:

Ու ամէն օր այդ խեղճ կինը կ'իսամերկ՝

ճամբաներուն վրայ կեցած,

Անձանօթի՛ն, անցորդի՛ն, թշնամիի՛ն եւ օտարի՛ն

Քղանցքներուն փաթթուելով խենթի մը պէս

կ'աղաղակէ...

Սա ձեռքերս կը տեսնէ՞ք, կը տեսնէ՞ք սա ձեռքերս.

Ես էի որ ասոնցմով նկուղին մէջ, իմ նորածինըս
խեղդեցի...

Հաւատացէ՛ք, ես էի որ գայն խեղդեցի, ի՛նչ անարդար
մարդեր էք,

Դուք ալ գոնէ զի՛ս խեղդեցէք, իմ ձեռքերս անգոր են.

Ես էի որ նորածինս նկուղին մէջ բոլոր ոյժովըս
խեղդեցի...

Սիրտ չունի՞ք դուք, խեղդեցէ՛ք զիս, իմ ձեռքերը ալ
ոյժ չունին...: